


Առ *հունվարի 1-ը 2012թ.* Հայաստանի ՓՄՁ զարգացման ազգային կենտրոնի կողմից ՓՄՁ պետական աջակցության 2011 թվականի ծրագրի շրջանակներում վարկային երաշխավորությունների տրամադրման, սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության, ՓՄՁ սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի/մատուցվող ծառայությունների շուկաներ առաջնդման, տեղեկատվական, խորհրդատվական և ուսուցողական ուղղություններով աջակցություն է ցուցաբերվել 2,485 սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտի, որոնցից 689-ը աջակցություն են ստացել ծրագրային մի քանի ուղղություններով:

2011 թվականին ընդհանուր առմամբ Հայաստանի ՓՄՁ զարգացման ազգային կենտրոնի կողմից վերը նշված ուղղություններով բավարարվել է 3,780 աջակցության հայտ:

<i>Տրամադրված աջակցության ուղղություն</i>	<i>Առ 01.01.2012թ. բավարարված աջակցության հայտերի թվաքանակ</i>
Տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն	3,588
Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն	95
Սկսնակ գործարարներին ֆինանսական աջակցություն	17
Թողարկվող արտադրանքի/մատուցվող ծառայությունների շուկաներ առաջնդման և արտահանմանն աջակցություն	47
Վարկային երաշխավորությունների տրամադրում	11
ՁԵՅ-ի հաղորդակցման կենտրոնի գործունեության շրջանակներում աջակցություն	22
<i>Ընդամենը</i>	3,780

Աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտների 11.3%-ը գործում են Երևան քաղաքում, իսկ 88.7%-ը՝ ՀՀ մարզերում՝ առավելապես հեռավոր և ային համայնքներում:

2011թ. ընթացքում աջակցություն ստացած ՓՄՁ-ների բաշխվածքն ըստ մարզերի



ՓՄՁ սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրման ծրագրի շրջանակներում 01.01.12թ. դրությամբ տրամադրվել է 52.1 մլն ՀՀ դրամի երաշխավորություն 11 ՓՄՁ սուբյեկտի՝ ապահովելով 90.9 մլն ՀՀ դրամի վարկային փաթեթ:

Աջակցություն ստացած 11 ՓՄՁ սուբյեկտների վարկային պարտավորության ընդհանուր չափը կազմել է 113.1 մլն դրամ: